ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՆԵԼ Է ՎԻՃԱՀԱՐՈՒՅՑ ՕՐԻՆԱԳԾԵՐԸ

10.01.2014 14:33



Հայաստանի արդարադատության նախարարությունը շրջանառությունից հանել է «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերը, որոնցով փաստաբանների ռեեստր վարելու լիազորությունը վերապահվելու էր ՀՀ արդարադատության նախարարությանը և սահմանվելու էր փաստաբանի համար յուրաքանչյուր տարի 60.000 ՀՀ դրամ պետական տուրք վճարելու պարտականություն:

«Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել մեր փաստաբաններին այդ խնդրի լուծման կապակցությամբ սկզբունքային վերաբերմունք դրսևորելու և ակտիվ մասնակցության համար: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ՀՀ արդարադատության նախարար պարոն Հրայր Թովմասյանին և բոլոր այն բարձրաստիճան պաշտոնատար անձանց, ովքեր կառուցողական քննարկումների արդյունքում հարգեցին և կարևորեցին փաստաբանի անկախությունը», -ասել է ՓՊ նախագահը:

Հիշեցնենք՝ Փաստաբանության և Պետական տուրքի մասին օրենքներում կառավարության նախաձեռնած փոփոխություններով, նախատեսվում էր փաստաբանների պետական գրանցամատյանը վարելու նոր ընթացակարգ և այդ լիազորությունը վերապահվել է ՀՀ արդարադատության նախարարությանը: Բացի այդ, նախագծերով նախատեսվում է, որ ՀՀ փաստաբանների պալատի կողմից արտոնագրված փաստաբանին փաստաբանների պետական գրանցամատյանում մեկ տարի ժամկետով հաշվառելու համար նախատեսվել է գանձել տարեկան պետական տուրք՝ 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամի չափով:

Հայաստանի փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի որոշմամբ, փաստաբաններին վերաբերող վիճահարույց օրինագծերի վերաբերյալ քննարկումների, նախագծերի ընդունման դեմ պայքարի համար Պալատի ռազմավարությունը մշակելու նպատակով ստեղծվել էր աշխատանքային խումբ: Բացի այդ, Փաստաբանների պալատի հարյուրավոր փաստաբաններ յուրօրինակ ֆլեշմոբ էին կազմակերպել՝ «Ոչ եմ ասում օրենքների նախագծին» կարգախոսով և իրավաբանների

ֆեյսբուքյան էջում ու իրենց անձնական էջում տարածում նախագծերի վերաբերյալ դիրքորոշումը:

Աղբյուրը՝ Panorama.am

Նախորդ նորությունը: ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ՄԱՍԻՆ

Հաջորդ նորությունը: ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՁԼՄ-ՆԵՐԻՆ

Առաջարկվող նորություններ

20.09.2013ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ՀՀ ՓՊ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻՆ

24.10.2013«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՄՈԿԿ ՆԱԽԱԳԱՀ Է.ՄԱՆԵՎԻԴԻՍԻ ԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Տ.ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

11.10.2013ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ «ՍՊԱՌՆՈՒՄ» Է ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԵՏ ՉԿԱՆՉԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

11.10.2013
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՉՊԵՏՔ Է ՄԻՋԱՄՏԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՆԿԱԽ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ. ՕՄԲՈՒԴՍՄԵՆ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })